ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. հունիսի 2-5-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Վահան Քերոբյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար

3.Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Սանկտ Պետերբուրգ, 2021թ. հունիսի 2-5-ը

4. Հրավիրող կողմը՝

Պետերբուրգյան միջազգային տնտեսական համաժողովի (ՊՄՏՀ) նախապատրաստման և անցկացման կազմակերպչական կոմիտե՝ Ռուսաստանի Դաշնության Նախագահի խորհրդական, ՊՄՏՀ Կազմկոմիտեի նախագահի տեղակալ-պատասխանատու քարտուղար Ա. Կոբյակովի կողմից ստացված հրավեր

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն XXIV Պետերբուրգյան միջազգային տնտեսական համաժողովին

6. Քննարկված թեմաները՝

- XXIV Պետերբուրգյան միջազգային տնտեսական համաժողովի շրջանակներում քննարկվել են ԵԱՏՄ, ՇՀԿ շրջանակներում համագործակցության հետ կապված, ինչպես նաև մի շարք այլ ոլորտային հարցեր, այդ թվում.

  - արդյունաբերության, փոքր և միջին ձեռնարկատիրության, զբոսաշրջության, տրանսպորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիաների ոլորտներին առնչվող հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ռուսաստանի Դաշնություն կայացած այցի ընթացքում ապահովվել է մասնակցություն Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից գլխավորած՝ XXIV Պետերբուրգյան միջազգային տնտեսական համաժողովի (այսուհետ՝ Համաժողով) լիագումար նիստին, որի ընթացքում վերջինս ներկայացրել է ՌԴ գործարար օրակարգի առաջնահերթությունները, ինչը հնարավորություն կտա Համաժողովի մասնակից պետությունների պետական և գործարար հատվածների ներկայացուցիչներին՝

այդ թվում նաև Հայաստանի, Ռուսաստանի հետ գործարար հարթակում փոխգործակցությունն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով նախանշել հիմնական միջոցառումները՝ հետագայում դրանց փոխշահավետ կերպով իրագործումն ապահովելու համար:

Համաժողովի շրջանակներում ապահովվել է նաև պրն. Վ. Քերոբյանի մասնակցությունը մի շարք պանելային քննարկումներին, մասնավորապես՝

- ✓ Հոբելյանի ճանապարհին. ՇՀԿ շրջանակներում տնտեսական համագործակցության նոր հորիզոններ
- ✓ Փոքր բիզնեսի դերի էվոլյուցիա. նոր մարտահրավերներ, նոր նպատակներ
- ✓ Զարգացող երկրների վենչուրային տնտեսությունը
- ✓ Էլեկտրոնային առևտուրը ԵԱՏՄ-ում: 2025թ. ակնարկ
- ✓ Բիզնեսի վերափոխումը՝ որպես տնտեսական աճի աղբյուր
- ✓ «Օկկամայի ածելի». ի՞նչն է կարևոր բիզնեսի համար հետկովիդյան ժամանակներում
- ✓ Եվրասիական մեծ գործընկերությունը տեխնոլոգիական վերափոխման դարաշրջանում
- ✓ Արդյունաբերական հեղափոխություն ֆինանսական ոլորտում. կենտրոնական բանկերի տոկենիզիրովացված ակտիվներ, թվային ֆինանսական ակտիվներ և թվային արժույթներ
- ✓ Սպառողական շուկան համաճարակից հետո. այն, ինչը չի սպանում, դարձնում է մեզ ավելի ուժեղ
- ✓ Ինչպե՞ս բարձրացնել արտահանման արդյունավետությունը. ինչպե՞ս առևտրով զբաղվել և չվախենալ
- ✓ Մեծ մարտահրավերներ. նոր գործակցություններ. ինչպե՞ս զարգացնել գիտության և հասարակության միությունը
- ✓ ԵԱՏՄ. ինտեգրման հաջողություններ և մարտահրավերներ, զարգացման նոր պարադիգմա
- ✓ Ցանցավորված ընկերակցություններ և ինստիտուտներ գլոբալիզացվող հասարակության մեջ. հասարակությանն իշխելու համար պայքար
- ✓ Տեխնոլոգիաների և կրթության արտահանում: Հնարավո՞ր է արդյոք ձևավորել ռուսական գիտատեխնիկական տարածք
- ✓ Private Equity՝ որպես գաղտնի սոուս Ռուսաստանի տնտեսական աճի բաղադրատոմսում

Ռուսաստանի Դաշնություն կայացած այցի ընթացքում՝ Համաժողովի շրջանակներում, նաև կայացել են երկկողմ ձևաչափով կազմակերպված մի շարք հանդիպումներ, այդ թվում՝ ՌԴ Դաշնային ժողովի դաշնության խորհրդի նախագահի տեղակալ Կոնստանտին Կոսաչյովի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել են Հայաստանում՝ ռուսաստանյան պատվաստանյութի արտադրության հնարավորությունները, ինչպես նաև «Ռուսական երկաթուղիներ» ընկերության ավելի լայն ներգրավվածությունը Հայաստանից և դեպի Հայաստան ուղևորների և բեռների փոխադրման գործընթացում: Ռուսաստանում Չիլիի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էդուարդո Էսկոբարի և Չիլիի Հանրապետության ԱԳ նախարարի միջազգային տնտեսական հարաբերությունների հարցերով տեղակալ Ռոդրիգո Յանյես Բենիտիսի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ առևտրատնտեսական համագործակցության ընդլայնման հեռանկարները: Չիլիական կողմը հետաքրքրվածություն է հայտնել Հայաստանը դիտարկել որպես հարթակ՝ Եվրասիական տնտեսական միության շուկա մուտք գործելու համար:

«Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Վյաչեսլավ Պավլովսկիի հետ հանդիպում ժամանակ քննարկվել են Փոթի-Կովկաս նավահանգիստներով լաստանավային կանոնավոր բեռնափոխադրումների ակտիվացման հնարավորությունները և կողմերը նախանշել են դրա վերագործարկմանն ուղղված հետագա քայլերը: Կազմակերպվել է նաև հանդիպում ՌԴ-ի Տուրիզմի դաշնային գործակալության «Ռոստուրիզմ»-ի ղեկավար Զարինա Դոգուզովայի հետ, որի ընթացքում քննարկվել են երկու պետությունների միջև զբոսաշրջիկների հոսքերի ավելացմանն ու համատեղ զբոսաշրջային ծրագրերի մշակմանն ուղղված համագործակցության հնարավորությունները: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կրթության, հետազոտությունների և մշակումների իրականացման և ռոբոտաշինության հարցերում մասնագիտացած «Innopolis University» միջազգային ծրագրերի տնօրենի տեղակալ Յուլիա Վալիուլինայի հետ հանդիպման ժամանակ քննարկվել են Հայաստանում տեխնոպարկերի ստեղծման ու զարգացման հետ կապված հարցեր:

«Global IT». աճի ռեսուրսներ» գործարար նախաճաշի ընթացքում SS ոլորտի ներկայացուցիչների հետ քննարկվել են SS ոլորտի նվաճումները և ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը տնտեսության տարբեր ոլորտներում, ինչպես նաև առաջադեմ միջազգային հաջողված փորձի կիրառման հեռանկարները Հայաստանում:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

09.06.2021թ.